

Ս. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ, Մարդու հիմնահարցը 13—15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ, Երևանի համալսարանի հրատ., 1999, 264 էջ:

Հայ փիլիսոփայությունն իր հարստությամբ, ազգայինի գոյությանն ու զարգացմանն ուղղված նպատակաչափությամբ արդի հայագիտական ուսումնասիրությունների կարևոր բնագավառներից է: Եվ այդ բնագավառին վերաբերող յուրաքանչյուր նոր, արժեքավոր ու գիտականորեն հիմնավորված հրատարակություն կարևոր ներդրում է հայ փիլիսոփայության և, ընդհանրապես, հայագիտության մեջ: Այս առումով անառարկելի արժեք են ներկայացնում ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի ղեկավար Սելվան Զաքարյանի «Մարդու հիմնահարցը 13—15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ» մենագրությունը (պատասխանատու խմբագիր՝ Ն. Ղ. Միրզոյան):

Հեղինակն իր բազմաթիվ հրատարակություններով հայտնի է որպես հայ միջնադարյան մշակույթի և, հատկապես, փիլիսոփայության պատմության քաջագիտակ ու բարեխիղճ ուսումնասիրող, իր գործին նվիրված գիտնական, որի լավագույն վկայությունն է գրախոսվող մենագրությունը: Ուշադրավ է հատկապես, որ հեղինակն ուսումնասիրության առարկա է ընտրել մեր ժողովրդի ու մշակույթի պատմության ամենակարևոր ժամանակահատվածներից մեկում՝ 13—15-րդ դարերում, մարդու հիմնահարցի մասին առաջադրված տեսակետներն ու գաղափարները, որոնք մի կողմից արդյունք էին նախորդ դարերի լավագույն ձեռքբերումների, իսկ մյուս կողմից՝ հիմք հանդիսացան հետագա դարերի համար: Ավելին, ուսումնասիրվող հիմնահարցն ունի ոչ միայն պատմաճանաչողական ու տեսական-փիլիսոփայական նշանակություն, այլև արդիական ու գործնական հնչողություն: Իսկ եթե ասվածին ավելացնենք նաև այն իրողությունը, որ մարդու հիմնահարցը հայ փիլիսոփայության մեջ մշտապես ունեցել է գաղափարական ու մեթոդաբանական առանցքային նշանակություն, իսկ 13—15-րդ դարերում այն դրսևորվել է միանգամայն նոր ձևով՝ ստանալով հասարակական-քաղաքական ընդգծված շնչու ու հնչողություն, ապա, կարծում ենք, պարզ է ինչպես գրախոսվող մենագրության նյութի, այնպես էլ նրանում արժարժված հարցերի և դրանց տրված լուծումների գիտատեսական ու գործնական-բարոյաճեղճական նշանակությունը:

Հարկ է նշել նաև, որ, ցավոք, ինչ-ինչ պատճառներով հայագիտական գրականության մեջ մարդու հիմնահարցը կամ չի կարևորվել կամ արժանացել է հարևանցի ու անուղղակի ուշադրության: Ուստի մենք լիովին համաձայն ենք հեղինակի հետ, որ մինչև օրս, «մասնագիտական գրականության մեջ լուսաբանված չեն միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ մարդու հիմնահարցի լուծման առանձնահատկությունները, զարգացման ընթացքը, տեսական-գաղափարական ակունքները, դասակարգված չեն հիմնական ուղղությունները, ըստ էության վերհանված և իմաստավորված չէ հիմնահարցին առնչվող փիլիսոփայա-պատմական նյութը և այլն» (էջ 8):

Այստեղ արդեն համառոտ ներկայացված է հարցերի այն հիմնական շրջանակը, որի լուսաբանման էլ նվիրված է հեղինակի հետազոտությունը:

Մենագրության առաջին գլխում՝ «Ժամանակաշրջանը և մշակութային կյանքի բնութագրերը», ի թիվս այլ հարցերի, հեղինակն ուշադրություն է դարձնում նաև Հայկական Վերածնության (Արևելյան Վերածնության) հիմնախնդրին (էջ 19—24), կարծելով, որ սվյալ հիմնախնդրի պարզաբանումը մեթոդաբանական կարևոր նշանակություն ունի նախ և առաջ այն պատճառով, որ «մշակույթի կենտրոնում կանգնած է մարդը և յուրաքանչյուր քիչ թե շատ մշակութային փոփոխություն կամ հեղաշրջում առաջին հերթին վերաբերում է սվյալ մշակույթի մեջ մարդու մասին պատկերացումների փոփոխության կամ վերաիմաստավորմանը» (էջ 19): Համեմատական վերլուծության ենթարկելով «Ծվրոպական Վերածնություն» և «Արևելյան Վերածնություն» հասկացությունների բովանդակային, տիպաբանական ու փիլիսոփայական-մշակութաբանական որոշ սկզբունքներ, քննարկելով Արևելյան Վերածնության կողմնակիցների տեսակետներն ու փաստարկները, նրանց մեթոդաբանական-գաղափարական որոշ հիմնավորումներ՝ Ս. Զաքարյանը ձգտում է համոզել, որ Հայկական Վերածնության ընդունումը չի համապատասխանում բուն իրականությանը, 10—14-րդ դարերի հայ մշակույթի բուն էությանը. վերջինս իսկական միջնադարյան մշակույթ է և տիպաբանորեն տարբերվում է Վերածննդի դարաշրջանի մշակույթից: Հենվելով իր հետազոտության արդյունքների վրա, նա պնդում է, որ «մարդու հիմնահարցին ազդեցություն է հասցրել ընդհանուր կարևորագույն՝ աշխարհայացքային նշանակություն ունեցող հարցերը ժամանակաշրջանի ժառանգները մեկնաբանում են միջնադարյան բրիտանական մարդաբանու-

Քյանը հատուկ սկզբունքների, գաղափարների ու մտեցումների տեսանկյունից» (էջ 247), կարծում ենք, որ հեղինակի այս մտեցումը, ինքնին վերցրած տրամաբանված է, փաստարկված և արժանի է հետագա ուշադրության:

Փիլիսոփայական, մարդաբանական առումներով հատկապես հետաքրքիր է այս գլխի «Փիլիսոփայական միտքը և մարդու հիմնահարցը» ենթագլուխը (էջ 24—49): Այստեղ հեղինակը պարզաբանում է միջնադարյան և, հատկապես, 13—15-րդ դդ. հայ փիլիսոփայությունը ուսումնասիրության հետ առնչվող հարցեր, մտցնում իր ճշգրտումները, ձևակերպում որոշ նոր մտեցումներ: Որքան մեզ հայտնի է, առաջին անգամ միջնադարյան հայ փիլիսոփայությունը համարվում է սխոլաստիկական փիլիսոփայություն՝ նկատի ունենալով ուշադրության արժանացած հարցերը և դրանց մեկնաբանման բնույթը հատկապես Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու, Մատթևոս Զուղայեցու, Առաքել Սյունեցու, ինչպես նաև Հայաստանում իրենց գործունեությունը ծավալած ունիթորականներ Բարդուղիմեոս Բուշիացու և Պետրոս Արագունացու աշխատություններում:

Մարդաբանական ու մեթոդաբանական տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում մարդու հիմնահարցի վերաբերյալ հեղինակի մտեցումը: Նա ճշգրտում է այդ հիմնահարցի շրջանակները, գտնելով, որ «մարդու փիլիսոփայական իմաստավորման մեջ պետք է ընդգրկել այն հարցերը, որոնք հնարավորություն կտան համակողմանիորեն ներկայացնելու մարդու կերպարը» (էջ 39):

Հարցերի քննման այս մակարդակում հեղինակն անառարկելիորեն հիմնավորում է, որ միջնադարյան փիլիսոփայական, աստվածաբանական ըմբռումների համակարգում մարդու հիմնահարցն ունի հանգուցային ու ինքնատիպ նշանակություն, և այս առիթով նա հակադրվում է հայտնի հետազոտող Մ. Բուբերի այն տեսակետին, որով մերժվում է մարդու հիմնահարցի գոյությունը միջնադարում: Հեղինակի համար անառարկելի է, որ բոլոր դարաշրջաններում մարդու հիմնահարցը հիմնականն է փիլիսոփայական աշխարհայացքում, բայց ոչ թե կրկնության, այլ մամանակի մշակութային ու սոցիալ-քաղաքական պահանջներին համապատասխան: Այս գաղափարի հիմնավորումն ու ապացույցն է դառնում նաև նյութի հետագա շարադրանքը հաջորդ ներխններում, իրենց որոշակիության (կոնկրետության), հարցերի առանձնահատկության ու մեկնաբանության մեջ:

Աշխատության երկրորդ գլուխն անվանվում է «Մարդու տիեզերական կարգավիճակի հարցը»: Հեղինակը բացահայտում է աշխարհի ու մարդու միջնադարյան փիլիսոփայական, աստվածաբանական պատկերի յուրահատկությունն՝ իր տեսադաշտում ունենալով հատկապես մարդու տեղի, դերի ու նշանակության հիմնահարցը աշխարհակառույցի ընդհանուր համակարգում: Ելնելով հայ մտածողների աստվածաբանական, փիլիսոփայական աշխատությունների վերլուծությունից՝ հեղինակը հիմնավորում է, որ տիեզերքի վերաբերյալ նրանց պատկերացումները բլենադանցական են, համապատասխանում են հարցի բրիտանեական-աստվածաբանական ըմբռնմանը, իսկ մարդու արարչաստեղծ իրերի ու արարածների համակարգում հանդես է գալիս դրանց հետ ունեցած իր ընդհանրությունը («միասնություն ու համերաշխության» սկզբունք), բայց, հատկապես, իր կարգավիճակի անկրկնելիությունը, եկականությամբ ու գերազանցությունով՝ որպես ստեղծվածներից գերազույնը, արարչության պսակ, աստվածային էակ («առավելություն ու գերազանցություն» սկզբունք): Այս երկվությունը, դրանց ներքին կապն ու հակադրությունը յուրօրինակ բանալի է մարդկային կեցության ինքնությունը գոյաբանական տեսակետից հասկանալու համար, որն, ի վերջո, հանգում է մարդկային գերակայության ընդունմամբ միջնադարյան մարդակենտրոնության, որքան էլ տարօրինակ թվա՝ նաև մարդապաշտության ձևավորման համար: Եվ պատահական չէ, որ միջնադարյան այդ մարդակենտրոնության ու մարդապաշտության, դրա հետ ձևավորվող հումանիզմի սկզբունքը ձևավորվել է հենց հակական մշակույթում՝ ի դեմս Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունների, որոնք յուրահատուկ ձևով խորհրդանշում են մարդկայինում առկա աստվածաստեղծ երկվության գոյությունը, բայց նաև այդ երկվությունը մարդու կատարելությանը հաղթահարելու գաղափարը: Եվ այստեղ ավելորդ չէ նշել, որ Գրիգոր Նարեկացու հարցարման այլ մակարդակում ու աշխարհայացքային այլ սկզբունքով կարծես առաջարկում է գերմարդու գաղափարը՝ հատկապես մարդու հոգեբարոյական, մտավոր կատարելության ու ինքնաձավալումների, նրա գերմարդկայնացման տեսանկյունից: Այսպիսով, անգամ միջնադարյան մտածողությունը հնարավորություն էր տալիս մարդաբանական կարգի թրոնիչների համար:

Երրորդ գլուխը վերնագրված է «Մարդու բնության ու ունակությունների մասին ըմբռնումները»: Այստեղ ուշադրություն է դարձվում մարդու բնության, մարմնի ու հոգու առանձնահատկությունների ու փոխկապվածության, մարդու իմացության, բանականության և դրանց հետ առնչվող այլ հարցերի վերաբերյալ հայ մտածողների տեսակետների վերլուծմանն ու ուսումնասիրությանը: Հեղինակը հիմնավորում է, որ միջնադարի ընդհանուր աշխարհայացքին բնորոշ այն հարցերի առաջդրումն ու քննումը հիմնավորված է, արամբանական և իրենցով ներկայացնում են փիլիսոփայական, աստվածաբանական ու մարդաբանական անառարկելի արժեք

Այս հիմքի վրա հեղինակը գիտնականի խորատեսությամբ ու հայ ազգային մշակութային քաղաքականության ըմբռնման գիտակցությամբ մարդարանական հիմնահարցերի մեջ է ներառում նաև իմաստության ջատագովությունը, որը, ըստ էության, որպես մարդու բանական, ճանաչողական, գիտական, իմաստասիրական կարողությունների ամբողջական էությունն արտահայտող երևույթ, հանդես է գալիս որպես հատուկ արժեք (տե՛ս էջ 159—169)։

«Մարդու էության, գործունեության և կյանքի իմաստի ըմբռնումը», հա՛ա 4-րդ գլխի հիմնական բովանդակությունն ու քննվող հարցերի համակարգը։ Կարելի է ասել, որ նախորդ գլուխների շարադրանքի ողջ տրամաբանությունը, առաջագրված հարցադրումներն ու դրանց հնարավոր լուծումներն են, որ, ի վերջո, նախապատրաստու, ու հասցրել են այս գլխին բնորոշ հարցերի ձևավորմանը։ Այստեղ մարդը, միջնադարի ընձեռած հնարավորությունների սահմաններում, հանում է որպես սոցիալ-քաղաքական, բարոյական էակ, հասարակականի, ազգայինի կրող՝ օժտված կամքի ու գործունեության ազատությամբ, ինքնիշխանությամբ, կյանքի իմաստով։ Որպես այդպիսին՝ մարդը նաև արժեքների կրող է ստեղծող է։ Մշակութաբանական աշխարհայացքային մեծ հետաքրքրություն է ներկայացնում կյանքի ու մահվան միջնադարյան ըմբռնման մեկնությունը՝ կապված ժամանակի քրիստոնեական հայեցակարգի, վախճանաբանության, խաչի խորհրդանշանային իմաստավորման և այլ յուրահատկությունների հետ, որոնք դարձյալ հնարավորություն են տալիս յուրովի հասկանալ մարդու հիմնահարցը հատկապես կյանքի ու մահվան հաջորդափոխման հոլովությամբ։ Այսպիսով, նաև ինքնատիպ ձևով բացահայտվում է կյանքի ու մահվան իմաստի սոցիալ-բարոյական և կրոնական յուրահատկությունն իրենց փոխկապվածության ու առանձնահատկության տեսակետից։

Գլուխների բովանդակության ու առաջագրած գաղափարների այս խիստ համառոտագրումն իրականում շատ քիչ բան է ասում այս մենագրության արժանիքների ու նրա հեղինակի կատարած գիտահետազոտական մեծածավալ աշխատանքի մասին։ Նա իրականացրել է իր առաջագրած հիմնական նպատակը՝ այն է, ապացուցել, որ մարդու հիմնահարցը ոչ միայն կենտրոնական տեղ է զբաղում 13—15-րդ դարերի հայ փիլիսոփայության մեջ, այլ կարող է նաև հզոր կովան դառնալ մշակութային ու փիլիսոփայական երևույթների իմաստավորման ու գնահատման համար (տե՛ս էջ 9)։ Եվ առհասարակ, մարդու հիմնահարցը հնարավորություն է տալիս նորովի արժեքավորել նաև ավանդական հարցերը։

Յուրաքանչյուր գիտական ուսումնասիրություն նաև նրա հեղինակի մարդկային ու գիտական բնութագրի շափանիչն է։ Ակնհայտ է, որ այս աշխատանքը կյանքի կոչելու համար Ս. Ա. Ըաքարյանն իրականացրել է բազմակողմանի գիտահետազոտական աշխատանք։ Որպես գիտնական ու հայ մարդ՝ նա պատասխանատվությամբ ու բարեխղճորեն է ուսումնասիրել 13—15-րդ դարերի հայ մտածողների ձեռագիր ու հրատարակված աշխատությունները։ Աշխատության պատմաճանաչողական ու գիտական արժանիքը առավել մեծ է նրանով, որ հեղինակը ոչ թե սահմանափակվել է նշված ժամանակաշրջանով, այլ պատմահամեմատական վերլուծությամբ իր աշխատության մեջ է ներառել նաև անցյալի ու ուշ շրջանների հայ և օտար ուսումնասիրողների տեսակետները, գաղափարները, որոնք հիմք են դարձել նաև տարբեր տեսակի փաստարկների, հիմնավորումների, սեփական գաղափարների ու հարցադրումների ամրապնդման կամ հիմնավորման համար։ Այսպիսով, արդի հայ փիլիսոփայական գրականության մեջ շրջանառության մեջ են դրվել ոչ միայն հայ, այլ նաև օտար ուսումնասիրողների, փիլիսոփաների ու աստվածաբանների մարդարանական պատկերացումները։ Նշված և մի շարք այլ արժանիքները հնարավորություն են տալիս պնդելու, որ հեղինակը հմուտ հետազոտող է՝ օժտված տրամաբանելու, վերլուծելու, ընդհանրացնելու, հասկացնելու ու համոզելու կարողությամբ, ինչը վրկայում է նրա փիլիսոփայական կուլտուրայի ու փիլիսոփայական պատշաճ մտածողության մասին։

Այս ամենը մեզ հուշում է, որ նկատվող որոշ թերություններ ամենևին էական չեն։ Դրանք ավելի շատ մոտեցումների ու հստակեցումների խնդիր են, որոնք հետագա ուսումնասիրությունների ու քննարկումների ընթացքում ավելի որոշակի կդառնան։ Այսպես, մեզ թվում է՝ տակավին բաց է մնում Հայկական (Արևելյան) Վերածնության խնդիրը, և հեղինակի ոչ բոլոր փաստարկներն են, որ այս հարցում կարելի է համարել բավարար։

Միտածանակ կցանկանայինք ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքին։ ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնը սկսում է ավելի որոշակիորեն կյանքի կոչել իր որդեգրած հիմնական նպատակը՝ հայ փիլիսոփայության մեջ մարդու հիմնախնդրի ուսումնասիրությունը։ Հուսանք, որ առաջնեկի այս բավականին հաջող ծնունդը կունենա իր ցանկալի ու արժանավոր շարունակությունը։

Ա. Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ս. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ